ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 09.02.2022թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ՍՑ-ՆԳ-2022/20

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի, ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 19.01.2022թ. թիվ 26/26-1/941-2022 գրությամբ «Լիֆտէլեկտրոնիքս» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. **<u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>**

ՀՀ ֆինանսների նախարարությունը, Երևանի քաղաքապետարանի (հետայսու նաև՝ Պատվիրատու) 12.01.2022թ. թիվ 01/61-655 գրության հիման վրա, 19.01.2022թ. թիվ 26/26-1/941-2022 գրությամբ նախաձեռնել է «Լիֆտէլեկտրոնիքս» ՍՊԸ-ին (հետայսու նաև՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. **<u>«Լիֆտէլեկտրոնիքս» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>**

«Լիֆտէլեկտրոնիքս» ՍՊԸ-ն ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված 31.01.2022թ. գրությամբ հայտնել է հետևյալ դիրքորոշումը.

««Լիֆտէլեկտրոնիքս» ՍՊԸ-ն (այսուհետ նաև՝ Ընկերություն) մասնակցել է Երևանի քաղաքապետարանի կարիքների համար կազմակերպված թիվ ԵՔ-ԳՀԾՁԲ-22/34 ծածկագրով գնման ընթացակարգին (այսուհետ նաև՝ Մրցույթ):

Մրցույթի գնահատող հանձնաժողովի նիստի 28.12.2021թ. ժամը 10:00-ի նիստի թիվ 2 արձանագրության 4.1 կետի համաձայն՝ «Լիֆտէլեկտրոնիքս» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտի փաստաթղթերում արձանագրվել են անհամապատասխանություններ:

Մասնավորապես, գնահատող հանձնաժողովը արձանագրել է, որ «Լիֆտէլեկտրոնիքս» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստաթղթերը վավերացված չեն թվային էլեկտրոնային ստորագրությամբ: Հավելված 1.2-ում /իրական շահառուների մասին հայտարարագրում/ դրված է էլ. ստորագրություն, որը ևս վավեր չէ: Միևնույն ժամանակ ստորագրությունը դրված է 11.12.2021թ. ամսաթվով, այն դեպքում, երբ ընթացակարգը հայտարարվել է 20.12.2021 թվականին: Հավելված 1.2-ում նաև լրացված չեն անձի հաշվառման և բնակության հասցեներ դաշտերը, ինչպես նաև իրական շահառուի կարգավիճակի վերաբերյալ տեղեկությունները դաշտերը:

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետով՝ գնահատող հանձնաժողովը որոշեց կասեցնել նիստը մեկ աշխատանքային օրով առաջարկելով՝ շտկել արձանագրված անհամապատասխանությունները:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից շտկման ծանուցումը ուղարկվել է մասնակցին միայն հաջորդ օրվա վերջում՝ 29.12.2021թ. ժամը 17:54 (էլ. փոստից արտատպումը կցվում է):

«Լիֆտէլեկտրոնիքս» ՍՊԸ-ի կողմից համապատասխան շտկումը կատարվել է 30.12.2021թ. ժամը 15:28-ին, բայց քանի որ այդ օրը հայտերի պատասխանատու անձը ժամը 14:00-ից հետո բացակայել է աշխատանքից՝ նախատոնական օր լինելով այմանավորված, ուստի շտկված փաստաթղթերը ուղարկվել է ՍՊԸ-ի տնօրենի կողմից այն հասցեյին, որից ստացվել է ծանուցում շտկում կատարելու վերաբերյալ (արտատպումը կցվում է):

Այնուհետև՝ գնահատող հանձնաժողովի 07.01.2022թ. տեղի ունեցած նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ «Լիֆտէլեկտրոնիքս» ՍՊԸ-ի կողմից անհամապատասխանությունները ընդհանրապես չեն շտկվել, որն էլ հիմք ընդունելով գնահատող հանձնաժողովի կողմից՝ որոշում է կայացվել «Լիֆտէլեկտրոնիքս» ՍՊԸ-ի հայտը գնահատել անբավարար և մերժել:

ՀՀ Սահմանադրության 86-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ տնտեսական, սոցիալական և մշակութային ոլորտներում պետության քաղաքականության հիմնական նպատակներն են գործարար միջավայրի բարելավումը և ձեռնարկատիրության խթանումը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 3-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում.

3) ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն:

Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետը սահմանում է, որ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, բացառությամբ այն դեպքերի, երբ հայտում բացակայում է գնային առաջարկը կամ հայտի ապահովումը,կամ գնային առաջարկը, կամ հայտի ապահովումը

ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Ինչպես արդեն հայտնել ենք, «Լիֆտէլեկտրոնիքս» ՍՊԸ-ն մասնակցել է Երևանի քաղաքապետարանի կարիքների համար կազմակերպված թիվ ԵՔ-ԳՀԾՁԲ-22/34 ծածկագրով գնման ընթացակարգին:

Մրցույթի գնահատող հանձնաժողովի նիստի 28.12.2021թ. ժամը 10:00-ի նիստի թիվ 2 արձանագրության 4.1 կետի համաձայն՝ «Լիֆտէլեկտրոնիքս» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտի փաստաթղթերում արձանագրվել են անհամապատասխանություններ:

Մասնավորապես, գնահատող հանձնաժողովը արձանագրել է, որ «Լիֆտէլեկտրոնիքս» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստաթղթերը վավերացված չեն թվային էլեկտրոնային ստորագրությամբ: Հավելված 1.2-ում /իրական շահառուների մասին հայտարարագրում/ դրված է էլ. ստորագրություն, որը ևս վավեր չէ: Միևնույն ժամանակ ստորագրությունը դրված է 11.12.2021թ. ամսաթվով, այն դեպքում, երբ ընթացակարգը հայտարարվել է 20.12.2021 թվականին: Հավելված 1.2-ում նաև լրացված չեն անձի հաշվառման և բնակության հասցեներ դաշտերը, ինչպես նաև իրական շահառուի կարգավիճակի վերաբերյալ տեղեկությունները դաշտերը:

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետով՝ գնահատող հանձնաժողովը որոշել է կասեցնել նիստը մեկ աշխատանքային օրով՝ առաջարկելով շտկել արձանագրված անհամապատասխանությունները:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից շտկման ծանուցումը ուղարկվել է մասնակցին միայն հաջորդ օրվա վերջում՝ 29.12.2021թ. ժամը 17:54:

«Լիֆտէլեկտրոնիքս» ՍՊԸ-ի կողմից համապատասխան շտկումը կատարվել է 30.12.2021թ. ժամը 15:28-ին, բայց քանի որ այդ օրը հայտերի պատասխանատու անձը ժամը 14:00-ից հետո բացակայել է աշխատանքից՝ նախատոնական օր լինելով այմանավորված, ուստի շտկված փաստաթղթերը ուղարկվել է ՍՊԸ-ի տնօրենի կողմից չիմացության պատճառով այն հասցեին, որից ստացվել է ծանուցում շտկում կատարելու

վերաբերյալ, փաստորեն armeps ոչ ավտոմատ ծանուցման հասցեին՝ info@armeps.am հասցեին:

Այնուհետև՝ գնահատող հանձնաժողովի 07.01.2022թ. տեղի ունեցած նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ «Լիֆտէլեկտրոնիքս» ՍՊԸ-ի կողմից անհամապատասխանությունները ընդհանրապես չեն շտկվել, որն էլ հիմք ընդունելով գնահատող հանձնաժողովի կողմից՝ որոշում է կայացվել «Լիֆտէլեկտրոնիքս» ՍՊԸ-ի հայտը գնահատել անբավարար և մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գ. Ներսիսյանի ուշադրությունն ենք հրավիրում հետևյալ հանգամանքների վրա, մասնավորապես՝

Ա) Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից արձանագրվել է հետևյալ անհամապատսխանությունը՝

1. ներկայացված հայտի փաստաթղթերը վավերացված չեն էլ. թվային ստորագրությամբ, միևնույն ժամանակ ստորագրությունը դրված է 11.12.2021թ. ամսաթվով, երբ Ընթացակարգը հայտարարվել է 20.12.2021թ.

2. Հավելված 1.2-ում նաև լրացված չեն անձի հաշվառման և բնակության հասցեների վերաբերյալ դաշտերը, ինչպես նաև իրական շահառուի կարգավիճակի վերաբերյալ տեղեկություններ դաշտերը:

Հատկանշական է այն փաստը, որ գնահատող հանձնաժողովը մեկ արձանագրել է, որ հայտի փաստաթղթերը վավերացված չեն էլ. թվային ստորագրությամբ, մեկ էլ արձանագրել է, որ միևնույն ժամանակ էլ. թվային ստորագրությունը դրված է 11.12.2021թ. ամսաթվով, ինչից կարելի է հետևություն անել, որ իրականաում առկա է եղել էլ. ստորագրություն:

Միևնույն ժամանակ անհասկանալի է, թե ինչի հիման վրա է գնահատող հանձնաժողովը եզրակացրել, որ էլ. թվային ստորագրությունը վավեր չէ: Ինչ վերաբերվում է ստորագրության ամսաթվին, ապա հայտնում ենք, որ իրական շահառուների վերավերյալ հայտարարությունը, որը նույնն է բոլոր մրցույթների համար, նախորոք պատրաստվել և ստորագրվել է ՍՊԸ-ի կողմից և այսուհետ կցվում է բոլոր հայտերին, այդ իսկ պատճառով առկա է ամսաթվի վերոհիշյալ խնդիրը:

Ինչ վերաբերվում է այն անհամապատասխանությանը, թե Հավելված 1.2-ում նաև լրացված չեն անձի հաշվառման և բնակության հասցեների վերաբերյալ դաշտերը, ինչպես նաև իրական շահառուի կարգավիճակի վերաբերյալ տեղեկություններ

դաշտերը, ապա հայտնում ենք, որ նշված հայտարարությունում լրացված չեն նաև այլ բազմաթիվ դաշտեր, որոնք լրացման պարտադիր լինելու վերաբերյալ գնահատող հանձնաժողովը որևէ կերպ չի արձագանքել (օր. հեռ. համար և էլ. հասցե, մասնակցության ձև և այլ), և ըստ էության ընկերությունը գտել է, որ անձի հաշվառման և բնակության հասցեների վերաբերյալ դաշտերը, ինչպես նաև իրական շահառուի կարգավիճակի վերաբերյալ տեղեկություններ դաշտերը նույնպես պարտադիր չեն: Բացի այդ խնդրում ենք նկատի ունենալ, որ վերոհիշյալ տեղեկատվությունը առկա է եղել մասնակցի կողմից լրացված Հավելված 1-ում:

Բ) ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, բացառությամբ այն դեպքերի, երբ հայտում բացակայում է գնային առաջարկը կամ հայտի ապահովումը,կամ գնային առաջարկը, կամ հայտի ապահովումը ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Ինչպես արդեն հայտնել ենք, Մրցույթի գնահատող հանձնաժողովի նիստի 28.12.2021թ. ժամը 10:00-ի նիստի թիվ 2 արձանագրության 4.1 կետի համաձայն՝ «Լիֆտէլեկտրոնիքս» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտի փաստաթղթերում արձանագրվել են անհամապատասխանություններ: Սակայն Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից շտկման ծանուցումը ուղարկվել է մասնակցին միայն հաջորդ օրվա վերջում՝ 29.12.2021թ. ժամը 17:54, այսինքն գրեթե երկու օր անց:

Մինչդեռ Կարգի 41-րդ կետի պահանջների համաձայն՝ հանձնաժողովի քարտուղարը պարտավոր էր այդ մասին մասնակցին ծանուցել հենց նույն օրը, այն է՝ 28.12.2021թ., ինչը տվյալ դեպքում, փաստորեն, չի կատարել:

Մինչդեռ՝ «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ նորմատիվ իրավական ակտի նորմը մեկնաբանվում է՝ հաշվի առնելով նորմատիվ իրավական ակտն ընդունելիս այն ընդունող մարմնի նպատակը՝ ելնելով

դրանում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությունից, ամբողջ հոդվածի, գլխի, բաժնի կարգավորման համատեքստից, այն նորմատիվ իրավական ակտի դրույթներից, ի կատարումն որի ընդունվել է այդ ակտը, տվյալ նորմատիվ իրավական ակտով սահմանված սկզբունքներից, իսկ այդպիսի սկզբունքներ սահմանված չլինելու դեպքում՝ տվյալ իրավահարաբերությունը կարգավորող իրավունքի ճյուղի սկզբունքներից:

Հետևաբար՝ Կարգի 41-րդ կետի համաձայն՝ հանձնաժողովի քարտուղարի՝ նույն նիստի օրը արձանագրված անհամապատասխանության մասին էլեկտրոնային եղանակով մասնակցին տեղեկացնելը Պատվիրատուի պարտականությունն է, այն իմպերատիվ (պարտադիր) դրույթ է, որի պահպանմամբ է միայն հնարավոր փաստել իրավահարաբերության առաջացումը:

Հակառակ դեպքում Կարգի 41-րդ կետով սահմանված դրույթները չեն ծառայի իրենց նպատակին, այլակերպ մեկնաբանման դեպքում կհանգեցնեն որևէ ողջամիտ իրավական փաստարկով չհիմնավորվող մեկնաբանության՝ հաշվի չառնելով այն ընդունող մարմնի նպատակը, նորմում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությունը օրենքներով:

Նման պարագայում քանի որ գնահատող հանձնաժողովի կողմից չի պահպանվել Կարգի 41-րդ կետի դրույթներով սահմանված իմպերատիվ (պարտադիր) դրույթը, ուստի գտնում ենք, որ նման պայմաններում «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետում նշված պատասխանատվությունը չի կարող վրա հասնել ու հանգեցնել Մասնակցին՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելուն:

Բողոքներ քննող անձին խնդրում ենք նկատի ունենալ, որ նույն փաստական հանգամանքներում (Կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետի խախտման հիմքով) գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գ.Ներսիսյանը թիվ ՍՑ-ՆԳ-2021/298 ընթացակարգով 04.11.2021թ. կայացրած թիվ ՍՑ-ՆԳ-2021/298 որոշմամբ մերժվել է «ԼԵՎ-ՇԻՆ» ՍՊԸ-ին «Գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում» ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը: Նույնը արձանագրվել է նաև թիվ ՍՑ-ՆԳ-2021/312 ընթացակարգով:

Բողոքներ քննող անձին խնդրում ենք նկատի ունենալ, որ այդ մեկ օրյա ուշացումը ակնհայտորեն ունեցել է իր բացասական հետևանքները ՍՊԸ-ի համար:

Մասնավորապես, Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից շտկման ծանուցումը ուղարկվել է մասնակցին միայն հաջորդ օրվա վերջում՝ 29.12.2021թ. ժամը 17:54:

«Լիֆտէլեկտրոնիքս» ՍՊԸ-ի կողմից համապատասխան շտկումը արդեն ստպված կատարվել է 30.12.2021թ. ժամը 15:28-ին, բայց քանի որ այդ օրը հայտերի պատասխանատու անձը ժամը 14:00-ից հետո բացակայել է աշխատանքից՝ նախատոնական օր լինելով այմանավորված, ուստի շտկված փաստաթղթերը ուղարկվել է ՍՊԸ-ի տնօրենի կողմից չիմացության պատճառով այն հասցեյին, որից ստացվել է ծանուցում շտկում կատարելու վերաբերյալ, փաստորեն armeps ոչ ավտոմատ ծանուցման հասցեին՝ info@armeps.am հասցեին:

Մինչդեռ եթե վերոհիշյալ ծանուցումը գնահատող հանձնաժողովի քարտուղարը ուղարկեր ՍՊԸ-ին Կարգի 41-րդ կետի պահանջների համաձայն հենց նույն օրը՝ այն է 28.12.2021թ., ապա Ընկերության հայտերի պատասխանատուն ինքը կզբաղվեր այդ շտկման գործընթացով և համապատասխանաբար 29.12.2021թ. կուղարկեր շտկված փաստաթղթերը ճիշտ հասցեին, այլ ոչ թե info@armeps.am հասցեին:

Ելնելով վերոգրյալից՝ խնդրում եմ հաշվի առնել ներկայացված փաստերը և փաստական հանգամանքները և Ընկերության դրսևորած վարքագիծը՝ «Լիֆտէլեկտրոնիքս» ՍՊԸ-ին չվերագրել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված գնման գործընթացի շրջանակում ստանձնած որևէ պարտավորության խախտում, և վերջինիսի չներառել «Գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում»:

«Լիֆտէլեկտրոնիքս» ՍՊԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2022/20 ընթացակարգի շրջանակներում 26.01.2022թ. ժամը 09:25-ին և 01.02.2022թ. ժամը 09:36-ին հրավիրված նիստերի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

3. <u>Երևանի քաղաքապետարանի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը</u>.

Երևանի քաղաքապետարանի 12.01.2022թ. թիվ 01/61-655 գրությամբ, հայտնել է հետևյալը.

«Տեղեկացնում եմ, որ գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով Երևանի քաղաքապետարանի կողմից կազմակերպված «ԵՔ ԳՀԾՁԲ-22/34» ծածկագրով գնման ընթացակարգին մասնակցության հայտ է ներկայացրել «Լինտէլեկտրոնիքս» ՍՊԸ-ն (այսուհետև՝ Մասնակից):

Ընթացակարգի շրջանակներում Մասնակցի կողմից ներկայացված հայտում արձանագրվել են հետևյալ անհամապատասխանությունները հրավերի պահանջների նկատմամբ.

Մասնակցի կողմից ներկայացված փաստաթղթերը վավերացված չեն թվային էլեկտրոնային ստորագրությամբ: Հավելված 1.2-ում լրացված չեն անձի հաշվառման և բնակության հասցեներ դաշտերը, ինչպես նաև իրական շահառուի կարգավիճակի վերաբերյալ տեղեկատվություն դաշտը:

Գնահատող հանձնաժողովը ղեկավարվելով «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» ՀՀ կառավարության 526-Ն որոշմամբ հաստատված կարգի (այսուհետ՝ Կարգ) 41-րդ կետի պահանջով՝ ծանուցել է Մասնակցին մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը: Մասնակցի կողմից սահմանված ժամկետում չի շտկվել արձանագրված անհամապատասխանությունը և գնահատող հանձնաժողովը ղեկավարվելով Կարգի 42-րդ կետի պահանջով՝ մերժել է Մասնակցի կողմից ներկայացված հայտը, որը հանգեցրել է գնման գործընթացին վերջինիս հետագա մասնակցության դադարեցմանը:

Վերոգրյալ իրավական հիմքերով պայմանավորված՝ ղեկավարվելով «Գնումների մասին» օրենքի (այսուհետ՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ ենթակետով, առաջարկում եմ Մասնակցի նկատմամբ կիրառել Օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով սահմանված դրույթը»:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2022/20 ընթացակարգի շրջանակներում 26.01.2022թ. ժամը 09:25-ին և 01.02.2022թ. ժամը 09:36-ին հրավիրված նիստերի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. <u>ՍՑ-ՆԳ-2022/20 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

ՍՑ-ՆԳ-2022/20 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն

հետևյալ փաստերը.

1. Երևանի քաղաքապետարանի կողմից կազմակերպվել է «ԵՔ-ԳՀԾՁԲ-22/34» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (հետայսու նաև՝ Ընթացակարգ), որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Լիֆտէլեկտրոնիքս» ՍՊԸ-ն:

2. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 28.12.2021թ. նիստի թիվ 2 արձանագրության համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովն արձանագրել է, որ «Լիֆտէլեկտրոնիքս» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստաթղթերը վավերացված չեն թվային էլեկտրոնային ստորագրությամբ: Հավելված 1.2-ում իրական շահառուների մասին հայտարարագրում դրված է էլ. ստորագրություն, որը ևս վավեր չէ: Միևնույն ժամանակ ստորագրությունը դրված է 11.12.2021թ. ամսաթվով, այն դեպքում, երբ ընթացակարգը հայտարարվել է 20.12.2021թ.: Հավելված 1.2-ում նաև լրացված չեն անձի հաշվառման և բնակության հասցեներ դաշտերը, ինչպես նաև իրական շահառուի կարգավիճակի վերաբերյալ տեղեկատվությունները դաշտերը:

3. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը նույն արձանագրությամբ որոշում է կայացրել նիստը մեկ աշխատանքային օրով կասեցնելու վերաբերյալ՝ Ընկերությանն առաջարկելով ծանուցումը ստանալուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունները:

4. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարը Armeps էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով 29.12.2021թ. ծանուցել է Ընկերությանն արձանագրված անհամապատասխանությունները շտկելու վերաբերյալ:

5. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 07.01.2022թ. նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովն արձանագրել է, որ «Լիֆտէլեկտրոնիքս» ՍՊԸ-ի կողմից չեն շտկվել հայտում առկա անհամապատասխանությունները և որոշում կայացրել վերջինիս հայտն անբավարար գնահատելու և մերժելու վերաբերյալ:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 19.01.2022թ. թիվ 26/26-1/941-2022

գրությունը, Երևանի քաղաքապետարանի 12.01.2022թ. թիվ 01/61-655 գրությունը՝ կից փաստաթղթերով, ինչպես նաև «Լիֆտէլեկտրոնիքս» ՍՊԸ-ի դիրքորոշումը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ. հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (հետայսու նաև՝ Կարգ) 41-րդ կետի համաձայն՝ եթե ***<u>հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ</u>*** ներառյալ այն դեպքերը, երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ

հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ***, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:*** Եթե անհամապատասխանությունն արձանագրվել է ՀՀ պետական եկամուտների կոմիտեից ստացված տեղեկատվության հիման վրա, ապա մասնակցին ուղարկվող ծանուցմանը կցվում է նաև կոմիտեից ստացված տեղեկատվության բնօրինակից սկանավորված տարբերակը: ***Մասնակցին ուղարկվող ծանուցման մեջ մանրամասն նկարագրվում են հայտնաբերված անհամապատասխանությունները:***

Կարգի 42-րդ կետի համաձայն՝ եթե սույն կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա նրա հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է, ներառյալ եթե մասնակիցը սույն կարգի 32-րդ կետի 1-ին մասի «դ» պարբերությամբ սահմանված ժամկետում չի ներկայացնում հայտի ապահովման բնօրինակը, իսկ ընտրված մասնակից է ճանաչվում հաջորդող տեղ զբաղեցրած մասնակիցը:

Այսպես, Երևանի քաղաքապետարանի կողմից կազմակերպվել է «ԵՔ-ԳՀԾՁԲ-22/34» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Լիֆտէլեկտրոնիքս» ՍՊԸ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի ***28.12.2021թ.*** նիստի թիվ 2 արձանագրության համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովն արձանագրել է, որ «Լիֆտէլեկտրոնիքս» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստաթղթերը վավերացված չեն թվային էլեկտրոնային ստորագրությամբ: Հավելված 1.2-ում իրական շահառուների մասին հայտարարագրում դրված է էլ. ստորագրություն, որը ևս վավեր չէ: Միևնույն ժամանակ ստորագրությունը դրված է 11.12.2021թ. ամսաթվով, այն դեպքում, երբ ընթացակարգը հայտարարվել է 20.12.2021թ.: Հավելված 1.2-ում նաև լրացված չեն անձի հաշվառման և բնակության հասցեներ դաշտերը, ինչպես նաև իրական շահառուի կարգավիճակի վերաբերյալ տեղեկատվությունները դաշտերը:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը նույն արձանագրությամբ որոշում է կայացրել նիստը մեկ աշխատանքային օրով կասեցնելու վերաբերյալ՝ Ընկերությանն

առաջարկելով ծանուցումը ստանալուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունները:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարը Armeps էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով ***<u>29.12.2021թ. ծանուցել է Ընկերությանն արձանագրված անհամապատասխանությունները շտկելու վերաբերյալ</u>***:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 07.01.2022թ. նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովն արձանագրել է, որ «Լիֆտէլեկտրոնիքս» ՍՊԸ-ի կողմից չեն շտկվել հայտում առկա անհամապատասխանությունները և որոշում կայացրել վերջինիս հայտն անբավարար գնահատելու և մերժելու վերաբերյալ:

Ընկերությունը ներկայացված դիրքորոշմամբ հայտնել է, որ գնահատող հանձնաժողովի նիստի 28.12.2021թ. ժամը 10:00-ի նիստի թիվ 2 արձանագրության 4.1 կետի համաձայն՝ «Լիֆտէլեկտրոնիքս» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտի փաստաթղթերում արձանագրվել են անհամապատասխանություններ, սակայն Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից շտկման ծանուցումը ուղարկվել է մասնակցին միայն հաջորդ օրվա վերջում՝ 29.12.2021թ. ժամը 17:54, այսինքն՝ գրեթե երկու օր անց, և քանի որ այդ օրը հայտերի պատասխանատու անձը ժամը 14:00-ից հետո բացակայել է աշխատանքից՝ նախատոնական օր լինելով այմանավորված, ուստի շտկված փաստաթղթերը ուղարկվել է ՍՊԸ-ի տնօրենի կողմից չիմացության պատճառով այն հասցեին, որից ստացվել է ծանուցում շտկում կատարելու վերաբերյալ, փաստորեն armeps ոչ ավտոմատ ծանուցման հասցեին՝ info@armeps.am հասցեին:

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ նորմատիվ իրավական ակտի ***<u>նորմը մեկնաբանվում է</u>՝ հաշվի առնելով նորմատիվ իրավական ակտն ընդունելիս այն ընդունող մարմնի նպատակը՝ <u>ելնելով դրանում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությունից,</u>*** ամբողջ հոդվածի, գլխի, բաժնի կարգավորման համատեքստից, այն նորմատիվ իրավական ակտի դրույթներից, ի կատարումը որի ընդունվել է այդ ակտը, տվյալ նորմատիվ իրավական ակտով սահմանված սկզբունքներից, իսկ այդպիսի սկզբունքներ սահմանված չլինելու դեպքում՝ տվյալ իրավահարաբերությունը կարգավորող իրավունքի ճյուղի սկզբունքներից:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 23-րդ կետի համաձայն՝ գնման գործընթացը գնում կատարելու նպատակով գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված ընթացակարգերի, իրավունքների և պարտականությունների իրագործմանն ուղղված գործողությունների ամբողջություն է: Միաժամանակ գնումների գործընթացի կազմակերպման կարգը սահմանող ՀՀ կառավարության 05.04.2017թ. N 526-Ն որոշումը հստակ կարգավորում է գնման գործընթացի իրականացման կարգը՝ փուլ առ փուլ և ժամկետները:

Ընդ որում՝ համապատասխան ժամկետային սահմանափակումներ նախատեսելն ինքնանպատակ չէ և ուղղված է կամայականություններից խուսափելուն և ժամանակին գործողություններն իրականացնելուն, քանի որ յուրաքանչյուր դեպքում ուղղված է իրավունքների և պարտականությունների իրագործմանը:

Այսինքն՝ Կարգի 41-րդ կետով սահնմանված է, հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ արձանագրվելու դեպքում հանձնաժողովի քարտուղարի համար էլեկտրոնային եղանակով նույն օրը դրա մասին մասնակցին ծանուցելու իմպերատիվ պահանջ, որի չպահպանման դեպքում, կարող են անտեսվել այն ընդունող մարմնի նպատակը, նորմում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությունը և հանգեցնել սխալ մեկնաբանման:

Այսպիսով՝ ժամկետային սահմանափակումները հետապնդում են իրավական որոշակիություն ապահովելու նպատակ՝ որպես պետությունում իրավական որոշակիության և կայունության երաշխավորման միջոց:

Միաժամանակ ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդվածի համաձայն՝ պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք իրավասու են կատարելու միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են Սահմանադրությամբ կամ օրենքներով:

ՀՀ սահմանադրական դատարանը 02.04.2014թ. կայացրած թիվ ՍԴՈ-1142 որոշմամբ իրավական որոշակիության սկզբունքի վերաբերյալ հայտնել է հետևյալ իրավական դիրքորոշումը. «Իրավական որոշակիության, իրավական անվտանգության և օրինական ակնկալիքների իրավունքի պաշտպանության սկզբունքները հանդիսանում են իրավական պետության ու իրավունքի գերակայության երաշխավորման անբաժանելի

տարրերը: Սահմանադրական դատարանը 2006թ. ապրիլի 18-ի ՍԴՈ-630 որոշման մեջ, մասնավորապես, արձանագրել է, որ «... օրենքը պետք է համապատասխանի նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանի մի շարք վճիռներում արտահայտված այն իրավական դիրքորոշմանը, համաձայն որի՝ որևէ իրավական նորմ չի կարող համարվել «օրենք», եթե այն չի համապատասխանում իրավական որոշակիության (res judicata) սկզբունքին, այսինքն՝ ձևակերպված չէ բավարար աստիճանի հստակությամբ, որը թույլ տա քաղաքացուն դրա հետ համատեղելու իր վարքագիծը»: Առավել ևս իրավունքի գերակայության սկզբունքի որդեգրման շրջանակներում օրենքում ամրագրված իրավակարգավորումները պետք է անձի համար կանխատեսելի դարձնեն իր իրավաչափ սպասելիքները: Բացի դրանից իրավական որոշակիության սկզբունքը, լինելով իրավական պետության հիմնարար սկզբունքներից մեկը, ենթադրում է նաև, որ իրավահարաբերությունների բոլոր սուբյեկտների, այդ թվում՝ իշխանության կրողի գործողությունները պետք է լինեն կանխատեսելի ու իրավաչափ»:

Վերը հիշատակված իրավական նորմերի նման մեկնաբանությունը բխում է նաև իրավական ակտերի որոշակիության սկզբունքից, որն իրավական պետությունում գործող կարևորագույն սկզբունքներից մեկն է, իսկ Հայաստանի Հանրապետությունը, ինչպես հռչակված է ՀՀ Սահմանադրության թե՛ մինչև 25.12.2015թ. գործող խմբագրությամբ, թե՛ ներկայում գործող խմբագրությամբ 1-ին հոդվածով, իրավական պետություն է:

Այսպիսով՝ Կարգի 41-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը ***<u>նույն օրը</u>*** դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը, մինչդեռ՝ արձանագրված անհամապատասխանությունների վերաբերյալ Ընկերությունը նույն օրը՝ ***<u>28.12.2021թ.,</u>*** ծանուցվելու փոխարեն ծանուցվել է ***<u>29.12.2021թ., ինչի արդյունքում Ընկերությունը զրկվել է գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ իրեն վերապահված իրավունքներն իրացնելու, այն է՝ արձանագրված անհամապատասխանությունները պատշաճ կերպով շտկելու հնարավորությունից:</u>***

Վերոգրյալ փաստական հանգամանքների ուժով՝ գտնում եմ, որ Պատվիրատուի կողմից Կարգով սահմանված իմպերատիվ պահանջների խախտմամբ անհամապատասխանությունները շտկելու վերաբերյալ ծանուցումն իրականացնելու արդյունքում ծագած բացասական հետևանքները չեն կարող մեկնաբանվել ի վնաս Ընկերության և հանգեցնել վերջինիս նկատմամբ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված պարտավորության խախտման հիմքով պատասխանատվության միջոցի կիրառմանը, այն է՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելուն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 19.01.2022թ. թիվ 26/26-1/941-2022 գրությամբ «Լիֆտէլեկտրոնիքս» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**